## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԱ-ՇՀԱՇՁԲ-15/3-16/02-3-1

**25.03.2016թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԱՇՁԲ-15/3-16/02-3» ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրության աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի**

ք.Երևան

«30» մարտ 2016թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է ՀՀ կառավարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԽԱՉԱՐԱՄ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 25.03.2016թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԱՇՁԲ-15/3-16/02-3» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1. Պայմանագրի 4.1. կետում «8210868 (ութ միլիոն երկու հարյուր տաս հազար ութ հարյուր վաթսունութ)» թվերն ու բառերը փոխարինել «6163890 (վեց միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր իննուն)» թվերով ու բառերով:

1.2. Պայմանագրի հավելված N 1-ի (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի) «Ընդամենը՝» տողում «8210868» թվերը փոխարինել «6163890» թվերով, իսկ 8-րդ, 9-րդ և 10-րդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8 | Թղթապանակ 5 | Թուղթը | Բարձրորակ, գեղարվեստական, դեղին գույնի թուղթ, 350 գ/ք.մ խտությամբ, մեկ ծալվող տեղով, չափսերը փակված վիճակում՝ 225x 320մմ, ներսից՝ աջ կողմում, ամբողջ երկարությամբ, նույն թղթից թեքությամբ սոսնձված գրպանիկով՝ 6-ից-8սմ (FEDRIGONI կամ համարժեք): | 2400 | 619.98 | 1487952 |
| | | Տպագրությունը | Դիմերեսին ՀՀ ոսկեփայլ զինանշանով (50մմ) և 3 տարբեր տեքստով: | | | |
| 9 | Թղթապանակ 6 | Թուղթը | Բարձրորակ, գեղարվեստական, դեղին գույնի թուղթ, 350 գ/ք.մ խտությամբ, մեկ ծալվող տեղով, չափսերը փակված վիճակում՝ 225x 160մմ, ներսից՝ աջ կողմում, ամբողջ երկարությամբ, նույն թղթից թեքությամբ սոսնձված գրպանիկով՝ 6-ից- | 2000 | 420 | 840000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 8սմ(FEDRIGONI կամ համարժեք): | | | |
| | | Տպագրությունը | Դիմերեսին ՀՀ ոսկեփայլ զինանշանով (50մմ) և 3 տարբեր տեքստով: | | | |
| 10 | Թղթապանակ 7 /եռաթել/ | Հումքը | Չափսերը փակված վիճակում՝ 330x 235x 90 մմ, պատրաստված 1000 գ/քմ խտությամբ ստվարաթղթից: Չորս կողմերից 90մմ բարձրությամբ, բաց գույնի արհեստական կաշի: Երեք կողմերից 90+100մմ փականներ (որից 90մմ արհեստական կաշվից): Երեք կողմերից 20 սմ երկարությամբ, 1սմ լայնությամբ 6 հատ ժապավեն՝ կապելու համար: Ներսից ամբողջությամբ սոսնձված սպիտակ թղթով: | 1100 | 1050 | 1155000 |
| | | Տպագրությունը | Դիմերեսին սև գույնով կամ սոսնձվող 100 x 80մմ թերթիկների վրա: | | | |

»:

1.3. Պայմանագրի հավելված N 2-ի (Վճարման ժամանակացույցի) «հոկտեմբեր», «նոյեմբեր», «դեկտեմբեր» և «Ընդամենը Տարի» սյունակներում «8210868» թվերը փոխարինել «6163890» թվերով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է երկու էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

/ Դ. Բեգլարյան /
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԽԱՉԱՐԱՄ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ» ՍՊԸ
ք. Երևան, Զ. Քանաքեռցու 50
«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 1810007739840100
ՀՎՀՀ 01000825
էլ. հասցեն՝ khacharamllc@gmail.com
հեռ. (010)286647, (094)415124,

/Հ. Հակոբյան/
Կ.Տ.